ԿԱՐԾԻՔ

Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Ռոմիկ Արմենի Ղազարյանի՝ «ՀՀ բնակչության կենսամակարդակի աճի ուղիների տնտեսամաթեմատիկական գնահատումը» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Բնակչության կենսամակարդակը լայն հասկացություն է, որն ընդգրկում է ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական բաղադրիչներ և բնութագրում է բնակչության ամենատարբեր պահանջմունքների բավարարման աստիճանը՝ հասարակության զարգացման տվյալ փուլում: Այդ պահանջմունքների բավարաման աստիճանը մեծապես կախված է բնակչության՝ ինչպես եկամուտ և սպառում, այնպես էլ արժանապատիվ կենսակերպ, առողջություն, կրթամակարդակ, աշխատանք և այլ բարիքներ ունենալու և ստեղծելու հնարավորություններից ու կարողություններից: Կայուն զարգացման հայեցակետի համաձայն, բնակչության կենսամակարդակի աճը՝ որպես մարդկային կապիտալի զարգացման նախադրյալ և հետևանք, երկրի կայուն զարգացման երեք հիմնասյուներից մեկն է: Ուստի, բնակչության կենսամակարդակի աճի ուղիների ուսումնասիրությունն արդիական է մեր երկրի համար, հատկապես նկատի ունենալով այդ կենսամակարդակի նվազագույն ստանդարտին համապատասխանող՝ նյութական ու բազմաչափ աղքատության ու զրկվածության բնութագրիչների բավական բարձր մակարդակը երկրում: Ըստ 2021թ.-ի տվյալների, ՀՀ բնակչության 26.5 տոկոսն աղքատ է, այսինքն, նրանց սպառումը փոքր է նվազագույն կենսամակարդակի ազգային ստանդարտից՝ նյութական տեսանկյունից: Միևնույն ժամանակ, ՀՀ բնակչության 18.7 տոկոսը բազմաչափ աղքատ է՝ նրանց ոչ նյութական պահանջմունքների բավարարման մակարդակը ցածր է նվազագույն ազգային ստանդարտից:

Չնայած նրան, որ վերլուծությունները ցույց են տալիս, որ Հայաստանում նվազագույն կենսամակարդակի բնութագրիչի՝ աղքատության կրճատումը առաձգական է տնտեսական աճի նկատմամբ, այնուամենայնիվ, եկամուտների բաշխման անհավասարությունը մնում է բավական բարձր, ինչն էլ խոչընդոտում է բնակչության բոլոր շերտերի կենսամակարդակի աճը՝ տնտեսական աճի պայմաններում: Սա վկայում է այն մասին, որ բնակչության եկամուտների բաշխման անհավասարության միտումներն ու չափման մեթոդները գիտական վերլուծության կարիք ունեն:

Նկատի ունենալով, որ Հայաստանում բնակչության միջին եկամուտների շուրջ կեսը ձևավորվում է ի հաշիվ վարձու աշխատանքի, բնակչության կենսամակարդակի աճի տեսանկյունից կարևորվում են ժամանակակից աշխատաշուկայում ներգրավվածություն ապահովող կրթական ծառայությունների, շարունակական

կրթության և վերարտադրության ծրագրերի, ինչպես նաև բնակչության առողջության պահպանման ծառայությունների համընդհանուր հասանելիություն և կենսամակարդակի նվազագույն ստանդարտից ցած գտնվողներին արդյունավետ զբաղվածության ու սոցիալական աջակցության ծրագրերի տրամադրումն ապահովող քաղաքականությունների վերանայումը և համապատասխան բարեփոխումների իրականացումը:

Նշված հիմնահարցերի լուծման համար պահանջվում է գիտական հիմնավորվածություն ունեցող մեխանիզմների մշակում: Սրանով է պայմանավորված քննարկվող ատենախոսության թեմայի արդիականությունը, որի հիմնական նպատակն ու խնդիրները բերված են ստորև:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն է ուսումնասիրել և գնահատել Հայաստանի Հանրապետության բնակչության կենսամակարդակն ու դրա աճի ուղիները: Որպես կենսամակարդակի հիմնական չափորոշիչներ առանձնացվել են մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, մարդկային զարգացումը և երկրում անհավասարության մակարդակը: Ներկայացված նպատակի իրագործման համար ատենախոսությունում դրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- նկարագրել և ուսումնասիրել բնակչության կենսամակարդակն արտացոլող հիմնական ցուցանիշները,
- ուսումնասիրել և ներկայացնել եկամուտների անհավասարության չափման տարբեր մեթոդներն ու մոտեցումները,
- ուսումնասիրել համեմատաբար նոր և համապատասխան գրականության մեջ դեռևս քիչ քննարկված անհավասարության գնահատման Պալմայի մեթոդը,
- բացահայտել Հայաստանում աշխատավարձերի տարբերության հիմնական պատճառները, ինչպես նաև գնահատել տնտեսական և սոցիալական մի շարք գործոնների ազդեցությունն աշխատավարձի մակարդակի վրա,
- վերլուծել Հայաստանում տնտեսական աճի և մարդկային զարգացման միջև փոխկապվածությունները, ինչպես նաև էմպիրիկ մեթոդներով բացահայտել այդ փոխադարձ կապի բնույթը,
- պարզել Հայաստանում անհավասարության մակարդակի և օտարերկրյա ուղղակի ներդրումների (այսուհետ՝ ՕՈՒՆ) կապի բնույթը, ինչպես նաև էմպիրիկ մեթոդներով գնահատել այս և մի շարք այլ գործոնների ազդեցությունը անհավասարության մակարդակի վրա:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության առաջին գլխում («Բնակչության կենսամակարդակի փոփոխությունը գնահատող ցուցանիշները») ատենախոսը՝

- ներկայացրել է «կենսամակարդակ», «բարեկեցություն» և «կյանքի որակ» հասկացությունների էությունը՝ ամփոփելով վերոհիշյալ հասկացությունների վերաբերյալ առանձին հեղինակների մոտեցումները,
- համակարգել և ներկայացրել է կենսամակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշները, մանրամասնորեն ներկայացնելով մարդկային զարգացումը բնութագրող ՄԱԿ-ի «Մարդկային զարգացման համաթիվը» (այսուհետ՝ ՄԶՀ) և դրա չափման ընդունված կարգը,
- վերլուծել է ՀՀ-ում բնակչության կենսամակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշների շարժընթացը՝ կենտրոնանալով բնակչության եկամուտների ու սպառողական ծախսերի և դրանց բաշխման, ինչպես նաև ՄԶՀ-ի ցուցանիշների վրա:

Աշխատանքի երկրորդ գլխում («Բնակչության կենսամակարդակի անհավասարության գնահատումը») ատենախոսը՝

- ներկայացրել է բնակչության կանսամակարդակի անհավասարության չափման միջազգայնորեն ընդունված հիմնական մոտեցումները՝ ցուցիչները,
- ուսումնասիրել ու վերլուծել է եկամուտների բաշխման անհավասարության Պալմայի գործակիցը, միջերկրային տվյալների շարժընթացների ուսումնասիրության և էկոնոմետրիկ մոդելավորման հիման վրա ցույց է տվել Պալմայի մեթոդի և Ջինիի գործակցի մեթոդի կիրառման համեմատականը,
- գնահատել է ՀՀ բնակչության եկամուտների բաշխման անհավասարությունը Պալմայի մեթոդով և Աթքինսոնի բանաձևով, այդ թվում՝ մարզային կտրվածքով:

Ատենախոսության երրորդ գլխում («ՀՀ բնակչության կենսամակարդակի աճի տնտեսամաթեմատիկական վերլուծությունը») հեղինակը՝

- գնահատել է ՀՀ բնակչության աշխատավարձերի մակարդակը պայմանավորող գործոնների ազդեցությունը բնութագրող էկոնոմետրիկ մոդելներ և արել համապատասխան եզրակացություններ,
- գնահատել է ՀՀ տնտեսական աճի և մարդկային զարգացման փոխկապվածությունը բնութագրող մակրոտնտեսական ավտոռեգրեսիվ բաշխված լագերով (ARDL) և սխալների ճշգրտման (ECM) էկոնոմետրիկ մոդելներ և արել համապատասխան եզրակացություններ,

– գնահատել է ՀՀ-ում եկամուտների բաշխման անհավասարության Պալմայի գործակցի կախումը մակրոտնտեսական որոշ ցուցանիշներից բնութագրող էկոնոմետրիկ մոդելներ և արել համապատասխան եզրակացություններ:

Աշխատանքի հիմնական արդյունքների և եզրակացությունների գիտական նորույթը և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսությունում ներկայացված ուսումնասիրությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են մի շարք արդյունքներ, որոնցից, որպես գիտական նորույթ, կարելի է առանձնացնել հետևյալները՝

– ստացվել են ՀՀ-ում եկամուտների բաշխման անհավասարության Պալմայի գործակիցները և հիմնավորվել է բնակչության եկամուտների անհավասարության չափման Պալմայի մեթոդի ու գործակցի կիրառման արդյունավետությունը՝ Ջինիի գործակցի համեմատությամբ,
– գնահատվել է ՀՀ-ում աշխատավարձի մակարդակի վրա սովորած տարիների ու աշխատանքային փորձի ազդեցությունը՝ տարբեր կրթամակարդակներ ունեցող բնակչության համար,
– գնահատվել է Հայաստանում տնտեսական աճի և մարդկային զարգացման միջև փոխադարձ կապը և բացահայտվել է, որ մարդկային զարգացման ազդեցությունն ավելի մեծ է տնտեսական աճի վրա, քան հակառակ ազդեցությունը,
– գնահատվել է Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների, ինչպես նաև մի շարք այլ մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը անհավասարության Պալմայի գործակցի վրա,
– բացահայտվել է, որ Հայաստանում ՕՌԻՆ-ի և եկամուտների անհավասարության միջև կապը բնութագրվում է շրջված U-աձև կորի միջոցով և հիմնավորվել, որ ՕՌԻՆ-ը սրում է եկամուտների անհավասարությունը, սակայն գոյություն ունի շրջման կետ, որից հետո ՕՌԻՆ-ի հետագա աճը նվազեցնում է այն:

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել մարդկային կապիտալի զարգացման, կրթության, առողջապահության, սոցիալական աջակցության ոլորտների, ինչպես նաև մակրոտնտեսական քաղաքականությունների մշակման ու բարեփոխումների իրականացման ընթացքում: Բնակչության եկամուտների բաշխման անհավասարության չափման Պալմայի գործակիցը, որպես անհավասարության մակարդակն արտացոլող այլընտրանքային մեթոդ, կարող է կիրառվել ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» տարեկան պարբերականությամբ հրապարակվող վիճակագրական-վերլուծական զեկույցներում:

Որոշ դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները՝

1. Աշխատանքի առաջին գլխի առաջին կետում «Կենսամակարդակ» հասկացության էությունը քննարկելիս ատենախոսը սահմանափակվել է առանձին հեղինակների կարծիքների պասիվ վերլուծությամբ: Անշուշտ ատենախոսությունն ավելի արժեքավոր կլիներ, եթե հեղինակը իր դիրքորոշումը ներկայացներ քննարկվող կատեգորիայի վերաբերյալ և նշեր այն սահմանումը, որի վրա հիմնված է իր հետազոտությունը:

2. Առաջին գլխի երրորդ կետում հեղինակը վերլուծել է ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշները, կենտրոնանալով բնակչության եկամուտների ու սպառողական ծախսերի վրա՝ որպես կենսամակարդակի նյութական կողմի բնութագրիչ, և ՄԶՀ-ի վրա՝ որպես դրա նյութական և ոչ նյութական բաղադրիչների համակցություն: Սակայն, ՀՀ բնակչության կենսամակարդակի վերլուծությունն ամբողջական կլիներ, եթե ներառեր նաև նվազագույն կենսամակարդակի ազգային ստանդարտի՝ նյութական աղքատության, ինչպես նաև բազմաչափ աղքատության և զրկվածության ցուցանիշների վերլուծությունը, որոնք հաշվարկվում և հրապարակվում են ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից:

3. Նույն տեղում հեղինակը վերլուծել է ՀՀ բնակչության մեկ շնչի հաշվով անվանական եկամուտների կառուցվածքն ու շարժընթացը, այդ թվում նաև ըստ դեցիլային բաշխման: Այդ վերլուծության արդյունքում նշվում է, որ ցածր եկամուտներ ունեցող դեցիլների բնակչության եկամուտների կառուցվածքում գերակշռում են պետական տրանսֆերտները, իսկ մնացածում՝ աշխատանքային եկամուտները: Սակայն հարկ է նշել, որ բարձր եկամուտ ունեցողներում կարևորվում են ինչպես աշխատանքային եկամուտները, այնպես էլ մասնավոր տրանսֆերտները՝ դրամական փոխանցումներն արտասահմանից: Այս հանգամանքի հաշվառումը թույլ կտար հաջորդ գլխուխներում գնահատված մոդելներում արտացոլել ինչպես ՕՈՒՆ-ի, այնպես էլ մասնավոր տրանսֆերտների (տվյալները հրապարակում է ԿԲ-ն) ազդեցությունը եկամուտների անհավասարության, մարդկային զարգացման ու ՀՆԱ-ի վրա, հատկապես նկատի ունենալով այդ երկուսի դեպի ՀՀ ներհոսքի մեծությունների հարաբերակցությունը:

4. Ատենախոսությունում տեղ են գտել լեզվառճական բնույթի որոշ թերություններ:

Եզրակացություն

Վերը նշված դիտողությունները կարող են ներառվել ատենախոսի հետագա հետազոտություններում և չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Ռոմիկ Արմենի Ղազարյանի ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն հետազոտություն, որն ունի գիտագործնական նշանակություն: Ընդհանուր առմամբ, ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով, հեղինակի տեսական և գործնական հետազոտություններն արդիական են: Աշխատանքում առկա են հավաստի և բազմազան վիճակագրական տվյալներ, էկոնոմետրիկ մոդելավորման տեխնիկաները կիրառված են պատշաճ մակարդակով և մանրամասնորեն ներկայացված են, դրանց հիման վրա արված են իրատեսական եզրակացություններ:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 7 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ռոմիկ Արմենի Ղազարյանի «ՀՀ բնակչության կենսամակարդակի աճի ուղիների տնտեսամաթեմատիկական գնահատումը» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ **Ն.Մ. ՋՐԲԱՇՅԱՆ**

Ն. Մ. Ջրբաշյանի
Ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու Մ.Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

13.01.2023թ.